Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Կատարողական վարույթը կասեցնելու մասին

07.10. 2020թ. ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Հասմիկ Ալեքսանյանս, ուսումնասիրելով թիվ 06104339 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23 ապրիլ 2020թ. տրված թիվ ԵԴ/1383/17/20 կատարողական թերթի համաձայն պետք է Զավեն Հարությունյանից, Նարինե Ասլանյանից և Սարգիս Քեփեկյանից հօգուտ <Ամերիաբանկ> ՓԲԸ-ի համապարտության կարգով բռնագանձել 28.218 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև 206,471 ՀՀ դրամ `որպես նախապես վճարված պետական տուրք: Բռնագանձումը տարածել Նարինե Ասլանյանին և Սարգիս Քեփեկյանին սեփականության իրավունքով պատկանող և գրավի առարկա հանդիսացող ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Բաբաջանյան փողոց 149 շենքի թիվ 6 բնակարանի վրա:

Պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվում է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պահանջատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Մանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 հոդվածներով և 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել թիվ 06104339 կատարողական վարույթը 60-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին.

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու երկամսյա ժամկետում կամ օրենքով սահմանված ժամկետներում:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ ՝ Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Digitally signed by
ALEKSANYAN HASMIK
6508860747
Date: 2020.10.07